ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՄԱՅԻՍԻ 9-Ի ԱՌԹԻՎ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Մայիսի 9-ի՝ հաղթանակների և խաղաղության խորհրդանշական օրվա առթիվ:
Այս օրը իմաստավորում է մեր ժողովրդի հերոսական անցյալը, Հայրենական մեծ պատերազմում և ազգային պայքարներում տարած հաղթանակները:
Այն մարմնավորում է հայ ժողովրդի անկոտրում ոգին, հերոսական պայքարը, հայրենիքի հանդեպ անսահման սերն ու նվիրումը: Մենք խոնարհվում ենք բոլոր նրանց հիշատակի առաջ, ովքեր իրենց կյանքի գնով կերտեցին հաղթանակներ և ապահովեցին մեր ժողովրդի արժանապատիվ ապագան:
Մայիսի 9-ը մեզ պարտավորեցնում է պահպանել ազգային միասնությունը, ամրապնդել հայրենիքը և նոր սերունդներին փոխանցել խաղաղության, հայրենասիրության ու տոկունության արժեքները:
Թող այս տոնական օրը յուրաքանչյուր ընտանիք լցվի խաղաղությամբ, բարօրությամբ և հավատով դեպի վաղվա օրը: